

փոքր աւազանին մէջ որ խնամքով քանդակուած եւ խոշոր քարերով հին շինուածքով մը ծածկուած է: Անիկա կը կոչուի Aïn ed-Diroueh (աղբիւր գազաթան): Եւսեբիոս, Յերոնիմոս, Պորտոյի ուխտաւորը, Մատապայի քարտէսը և ԺԳ. դարէն առաջ բոլոր ուխտաւորները կը սորվեցնեն թէ «Պէյթ Սուրի զիմացը կը գտնուի աղբիւրը՝ Քերբոնի և Գազայի հոովմէական ճանապարհին վրայ»: Վիլլիպալտ այցելած է աղբիւրին փոքր եկեղեցին: Ինը տարի յետոյ Conzalès եկեղեցին մղկիթի վերածուած գտաւ: Այս տեղւոյն աւերակները որ Casr Islaiyîn անունը կը կրեն, 1874 ին Conder հաստատած է թէ անոնք եկեղեցիի մը աւերակներն են 17 մ. երկայնութեամբ և 14 մ. լայնութեամբ: 1885 ին իսլամները անհետացուցին զանոնք աղբիւրէն քիչ հեռու մղկիթ մը շինելու համար: Հոն կը տեսնուին նաև իջեռանի մը հետքերը: Աղբիւրին արևելեան կողմը կը գտնուին ջուրի խողովակներ՝ աւազանով: Գոնտէր հոն գտած է նաև հոովմէական քարայտակի մը հետքերը (Bar. gd. էջ 244-45):

1859 ին Չմիւռնիացի Յովհաննէս պատրիարք գընած է Ս. Փիլիպպոսի աղբիւրին վրայի պարտէզը, և վերջին տարիները անոր կից այգիները գնուեցան ուրոնք բոլորն ալ Հայոց սեպհական ստացուածք են:

3. Մամբրէի կաղնիին աւանդութիւնները. — Պէյթ Սուրի հարաւը 3 քմ. հեռու փոքր սարահարթ մը կայ բլուրներէ շրջապատուած և ծածկուած ընդարձակ ու խոշոր աւերակներով: Անոր անունն է Պէյր էլ Խալիլ (էր րահիւսան): Խալիլ՝ Աստուծոյ ընտիր բարեկամը, այն անունն է որով Արաբները սովորաբար կը հասկնան Աբրահամ նահապետը. բաց աստի, Եսայիի մարգա-